Հավելված

ՀՀ վարչապետի 2013 թվականի

նոյեմբերի 26-ի N 1087-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանի Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին

Անունը, ազգանունը	1. Սամվել Հարությունյան 2. Լևոն Մարդոյան
Զբաղեցրած պաշտոնը	1. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ 2. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար
Գործուղման վայրը և ժամկետները	1. Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա, Դուբնա), 2017թ.նոյեմբերի 22-25-ը, 2. Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա, Դուբնա), 2017թ.նոյեմբերի 20-22-ը
Հրավիրող կողմը	1. ՌԴ կրթության և գիտության նախարարություն, Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Գիտական պարկ, Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ (ՄՀՄԻ) 2. Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ (ՄՀՄԻ)
Գործուղման նպատակը	1.1) Հանդիպում ՌԴ կրթության և գիտության նախարարությունում, 1.2) Հանդիպում Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Գիտական պարկի տնօրենի հետ, 1.3) Հանդիպում ՌԴ գիտությունների ակադեմիայի գեոֆիզիկայի կենտրոնի տնօրենի հետ,

	1.4) Մասնակցություն ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նաստաշրջանին: 2. Մասնակցություն ՄՀՄԻ անդամ-պետությունների ֆինանսական կոմիտեի նիստին:
Քննարկված թեմաները	1.1) ԱՊՀ և ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում բարձրագույն կրթության և գիտության ոլորտում ռուս-հայկական համագործակցության զարգացմանն ուղղված հարցեր, 1.2) Հայաստանում տեխնոպարկեր հիմնելու հետ կապված խնդիրներ, 1.3) Գյումրիում Երկրի գեոմագնիսական դաշտի ուսումնասիրման նոր լաբորատորիայի հիմնում, 1.4) ՄՀՄԻ գործունեություն, 2. ՄՀՄԻ 2018 թ. բյուջեն, անդամ-պետությունների անդամավճարների հաշվարկման հարցը՝ 2019-2021թթ. համար, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ՄՀՄԻ անդամավճարի չափը:
Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը	1. Սամվել Հարությունյանը՝ 1.1) Հանդիպել է ՌԴ ԿԳ փոխնախարար Գրիգորի Տրուբնիկովի հետ: Քննարկվել են ԱՊՀ և ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում ռուս-հայկական համատեղ գիտական գործունեության զարգացմանն ուղղված հարցեր: Առաջարկվել է վերանայել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ֆինանսավորման չափը, ինչպես նաև «Բուհերը՝ որպես ինովացիոն տարածք ստեղծելու կենտրոն» նախագծի իրականացման նպատակով Սլավոնական համալսարանի հիման վրա ստեղծել

	ինովացիոն և տեխնոլոգիական զարգացման տարածաշրջանային համալսարանական կենտրոն: 1.2) Հանդիպել է Մոսկվայի պետական համալսարանի տեխնոպարկի տնօրենի հետ: Քննարկվել են համագործակցության ընդլայնմանն ուղղված քայլերը: 1.3) Հանդիպել է ՌԴ գիտությունների ակադեմիայի գեոֆիզիկայի կենտրոնի տնօրեն Ալեքսեյ Գվիշիանիի հետ: Կոմիտեի նախագահին առաջարկվել է Գյումրիում՝ ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի հետ համատեղ ստեղծել Երկրի գեոմագնիսական դաշտի ուսումնասիրման նոր լաբորատորիա, որի համար ռուսական կողմը պարտավորվել է տրամադրել սարքավորումներ և մասնագիտական աջակցություն: Կոմիտեի նախագահն իր հերթին խոստացել է աջակցել ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտին՝ նոր լաբորատորիա հիմնելու հարցում: 1.4) Մասնակցել է ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի նստաշրջանին: Նստաշրջանի ընթացքում քննարկվել են ՄՀՄԻ գիտական խորհրդի 122-րդ նստաշրջանի առաջարկությունները, 2018 թ. բյուջեի նախագիծը, ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նիստի արդյունքում ընդունված որոշումները և առաջարկությունները, ՄՀՄԻ 2016թ. ֆինանսատնտե-սական գործունեության աուդիտորական ստուգման արդյունքները: Նստաշրջանի ընթացքում ամփոփվել են ՄՀՄԻ 2017թ.

	գործունեության արդյունքները և մշակվել են առաջիկա տարիների ռազմավարական զարգացման գերակա ուղղությունները և պլանները: Նիստի ընթացքում ներկայացվել են զեկույցներ՝ ՄՀՄԻ 2017 թ. գործունեության արդյունքների ամփոփման և ռազմավարական զարգացման հիմնական ուղղությունների, հիմնական գիտական նախագծերի ներկա կարգավիճակի և հեռանկարների, ինչպես նաև 2018թ. բյուջեի ձևավորման քաղաքականության վերաբերյալ: 2. Լևոն Մարդոյանը մասնակցել է ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նիստին, որի ընթացքում քննարկվել են ՄՀՄԻ 2016թ. ֆինանսական գործունեության աուդիտորական ստուգման արդյունքները, ՄՀՄԻ 2018թ. բյուջեի նախագիծը, ՄՀՄԻ 2018թ. գիտահետազոտական գործունեության ծրագրերը, ինչպես նաև ՄՀՄԻ ֆինանսական հարցերով լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նախագահին կից աշխատանքային խմբի նիստի արդյունքում ընդունված առաջարկությունները և այլ հարցեր:
Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածություն-ները, ստորագրված փաստաթղթերը	1.1) ՌԴ ԿԳ փոխնախարարի հետ հանդիպման արդյունքում որոշվել է հստակ քայլեր ձեռնարկել նոր համատեղ գիտահետազոտական լաբորատորիաներ ստեղծելու, բարձրագույն կրթության ոլորտում համատեղ ցանցային կառույցներ հիմնելու ուղղությամբ: Այս առիթով նախատեսվում է Հայաստանում 2018 թ. գարնանը կազմակերպել աշխատանքային սեմինար՝ շահագրգիռ գիտական կազմակերպությունների, բուհերի ղեկավարների և ներկայացուցիչների մասնակցությամբ: 1.2) Լոմոնոսովի անվան պետական համալսարանի

	Գիտական պարկի տնօրենի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ռուսական կողմն աջակցի հայաստանյան բուհերում ևս նման տեխնոպարկեր հիմնելուն, մասնավորապես՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում, որն արդեն բավարար աշխատանքներ ունի կատարած այդ ուղղությամբ: 1.3) ՌԴ գիտությունների ակադեմիայի գեոֆիզիկայի կենտրոնի տնօրեն Ալեքսեյ Գվիշիանիի հետ հանդիպման արդյունքում կողմերը պայմանավորվել են աջակցել Գյումրիում Երկրի գեոմագնիսական դաշտի ուսումնասիրման նոր համատեղ լաբորատորիայի ստեղծմանը: 1.4) ՄՀՄԻ նիստի ընթացքում ընդունվել է ինստիտուտի 2018թ. բյուջեն, ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նիստի արդյունքում ընդունված որոշումները և առաջարկությունները, ՄՀՄԻ 2016թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտորական ստուգման արդյունքները: 2. ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նիստի ընթացքում ընդունվել է ինստիտուտի 2018թ. բյուջեն, ինչպես նաև՝ ՄՀՄԻ անդամ- պետությունների կողմից վճարվող 2019, 2020, 2021 թթ. տարեկան անդամավճարների չափը հաստատող փաստաթուղթը:
Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	1.1) ՌԴ ԿԳ փոխնախարարի հետ հանդիպման արդյունքում առաջարկվել է ստեղծել համատեղ գիտահետազոտական լաբորատորիաներ, հիմնել բարձրագույն կրթության ոլորտում համատեղ ցանցային կառույցներ, Հայաստանում 2018 թ. գարնանը կազմակերպել աշխատանքային սեմինար: 1.2) Լոմոնոսովի անվան պետական համալսարանի

	Գիտական պարկի տնօրենի հետ հանդիպման ժամանակ առաջարկվել է ՌԴ գործուղել հայ գիտնականներին՝ տեխնոպարկերի գործունեությանը տեղում ծանոթանալու համար: 1.3) ՌԴ գիտությունների ակադեմիայի գեոֆիզիկայի կենտրոնի տնօրեն Ալեքսեյ Գվիշիանիի հետ հանդիպման արդյունքներով՝ նոր լաբորատորիայի բացման դեպքում ռուսական կողմը խոստացել է տրամադրել ավելի քան 300000 եվրո արժողությամբ սարքեր և սարքավորումներ: 1.4) Որոշվել է ՄՀՄԻ անդամ-պետությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի հերթական նիստն անցկացնել 2018թ. մարտին: 2. Որոշվել է ՄՀՄԻ անդամ-պետությունների ֆինանսական կոմիտեի հերթական նիստն անցկացնել 2018թ. մարտին:
Գործուղվող	Սամվել Հարությունյան
Ստորագրություն, ամսաթիվ	28.11.2017 թ.